*Սորա տակն է, կամարակալ քարի վերայ, Ամիր-Հասանի կնոջ Թաճերի արձանագրութիւնը ՁԾԶ (=* 1307*) թուականից, որ տեսել ենք արդէն (Յաւել. Ա.* 18*գ)(*). մեր կարծիքը նորա տոհմական ծագման մասին քիչ յետոյ։*

*որի անունը կարդացուած է այլ և այլ կերպ (Յաւել. Ա.* 18*դ, պատկ.* 186*)(*) ՁԾԸ (=* 1309*) թուականին եւ ոչ ՁՁԸ կամ ՁԺԸ, տալիս է իւր «հայրենի իգլին պարոնացն ողորմութք. Էաչո եւ Մամախաթունին» «Մխիթարա հոգւոյն» եւ երեք ժամ ստանում,*



*Պատկեր 186.*

*Պռոշեանների մի ուրիշ պաշտօնեայ Սիմիանոս, երկուսը Մխիթարին եւ մէկն իրեն։ Ջալալեան, Քաջբերունի, Ալիշան նուիրատուի անունը Սիմէոն են կարդացել եւ թուականը ՁՁԸ նշանակել, որ սխալ է. Էաչին, Մամախաթունի ամուսինը, Օրբէլեանների փեսան, վախճանուել է* 1317 *թուին, ուրեմն եւ նուի-*

*«Խաթուն դուստր Խալայչահի» Ամաղուի Նորավանքին* 300 *սպիտակ է նուիրել, այգի գնել Արփայում և Տէր Սարգսի կարգադրութեամբ երկու օր պատարագ ստացել։ Տէր Սարգիսը Սիւնեաց նոյնանուն եպիսկոպոսն է* (1274-1298, *տե՛ս Օրբէլ., եր.* 499), *վախճանուած ՉԽԷ թուականին (Ալիշան, Սիսական, եր.* 194)։

(*) *Խաղբակեանք Ա., եր.* 154, *պատկ.* 60։

(*) *Ընթերցուածների և թուականի տարբերութիւնները տե՛ս Յաւելուածի մէջ։*